

ՇՏԱՊ ԳՐՎԱԾ ՄԻ ԳՐԱԵՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փարիզում հրատարակվող «Revue des Etudes Arméniennes»-ի 2-րդ հատորում, էջ 452—456, լույս է տեսել Յա. Դաշկևիչի ստորագրությամբ մի գրախոսություն՝ նվիրված XVII դ. հեղինակ Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին խոթինու» երկին, որի հայերեն բնագիրն իմ ջանքերով հրատարակվեց 1964 թ. Երևանում, իսկ նրա ռուսերեն թարգմանությունը, որը Կ. Ն. Յուզբաշյանի ձեռքով էր կատարված, լույս էր տեսել ավելի վաղ՝ 1958 թ. (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, № 2, 1958, էջ 261—286)։

Խորապես շնորհակալ եմ դրվատական այն տողերի համար, որ հարգելի գրախոսը նվիրել է ինձ՝ որպես հրատարակչի, որը հայտնաբերել է Լեհաստանի երբեմնի հայ գաղութից մնացած պատմական այս թանկարժեք աղբյուրը և «շատ բարիխիղճ կերպով պատրաստված» քննական հրատարակությամբ ներկայացրել զիտական աշխարհին։ Նվ սակայն գրախոսության մի քանի կետերն ինձ հարկադրում են ճշտումներ անել, որպեսզի թյուրիմացությունների տեղ չմնա անպազայի համար։

1. Ինչպես արդեն նշեցի՝ հրատարակված բնագրի ռուսերեն թարգմանությունն ինձ չի պատկանում։ Թարգմանության ստաշարանում ասվում էր. «Ներկա թարգմանությունը... կատարված է Կ. Ն. Յուզբաշյանի ձեռքով՝ մեր կողմից տպագրության պատրաստված քննական բնագրի վրայից»։ Նույնը կրկնվում էր հայերեն բնագրի հրատարակության մեջ (էջ 18)։

Բայց ահա, յգիտես ինչո՞ւ, ռուսերեն թարգմանությունը քննադատելիս՝ գրախոսը չի կամեցել հիշատակել իսկական թարգմանչի անունը և, իր խոսքերն ուղղելով իմ հասցեին, բառացի գրել է. «Ինքն է, որ 1958 թ. հրատարակեց Հովհաննեսի երկի ռուսերեն թարգմանությունը... Նոր լույս տեսած հայերեն բնագրի և նախկին ռուսերեն թարգմանության համեմատությունը թույլ է տալիս նկատել լուրջ սխալներ (անունների սխալ տառադարձություններ, աստիճանների սխալ թարգմանություններ, սխալներ՝ բանականների մարդավերի մեջ, բաց թողնված մի քանի անցքեր)։ Այս սխալների մեծ մասն արդեն նկատվել է նույնիսկ Լ. Ս. Անասյանի կողմից, որն իր գրքում խոսում է այդ մասին»։

Հասցեատերերի այս շփոթությունը բացահայտորեն թյուրիմացություն է և առնվազն շտապողականության արդյունք։

2. Ես նպատակ չունեմ Կ. Ն. Յուզբաշյանի կատարած ռուսերեն թարգմանության պաշտպանության համար փաստաբանի դեր ստանձնելու, բայց և այնպես՝ ինձ և ամեն մի ընթերցողի համար բաղձալի կլինեն իմանալ, թե հանվանե որո՞նք են այդ «լուրջ սխալները»։ Տարբարատար անորոշ բնույթ կրող այդ հայտարարությունը պարզաբանելու համար գրախոսողը բերում է միայն նույն բնույթի ուրիշ հայտարարություններ, ինչպես՝ «սխալ տառադարձություններ», առանց նշելու որևէ օրինակ, որը ցույց տար հայտարարության ճշտությունը։ Բայց եթե, օրինակի համար, ենթադրենք որ, ըստ գրախոսի, Յովհաննէս Կամենացի անունը պետք է տրվեր Ованнес Каменаци ձևով (ինչպես տեսնում ենք նրա «Армянские колонии на Украине» աշխատության մեջ, Երևան, 1962, էջ 58—59) և ոչ թե Иоаннес Каменецкии (ինչպես գտնում ենք Յուզբաշյանի մոտ), կարելի չէ նրա հետ համաձայն լինել՝ առանց ոտնահարելու դասական բանասիրության մեջ նվիրագործված կանոնները, որոնք պահանջում են օտար անունները տառադարձել ու որդեգրել տվյալ լեզվին ընտանի ձևերի տակ (ոչ թե հունական ձևով Արամեասիոս Ալեքսանդրէիս, այլ հայացած՝ Արամեաս Աղեքսանդրացի, կամ ռուսացած՝ Афанасий Александрійский)։ Ուրեմն՝ Յուզբաշյանը ճիշտ է վարվել ռուսերենին ընտանի ձև տալով Յովհաննէս Կամենացի անվանը։ Տառադարձության հարցերում թարգմանիչ Յուզբաշյանը վայելել է իմ լիակատար հավանությունը։

3. Դրա հետ միասին՝ քանի որ գրախոսը «սխալ տառադարձությունների» մասին խոսելով որպես տառադարձության պաշտպան է հանդես գալիս, պետք է դիտել տամ, որ նրա գրախոսության մեջ տառադարձությունն առհասարակ անտեսված է (բացառելով միայն Յովհաննէս-

Yovhannes անունը): Օրինակ՝ այն ամբողջը, որի պարիսպների տակ տեղի ունեցավ 1621 թ. լեհ-թուրքական պատերազմը (հայ. Խոտին կամ Խորին, ռուս. Хотин), գրախոսի կողմից տառադարձված է Khotin, փխ. Xotin-ի: Նմանապես՝ հայ-կոմաներեն ժամանակագրության հեղինակի անունը, որ Օֆսենտ է, նա տառադարձել է Ok'sent, փխ. Awk'sent-ի կամ Luk'sent-ի: Պետք էր հաշվի առնել, որ այս անվան ուղղագրական դասական ձևն է ոչ թե Օֆսենտ, այլ Աւֆսենտ (լատ. Auxentius): Այս տեսակետից նշելի է, որ Յուզբաշյանի կողմից տրված ռուսական АВКСЕНТ տառադարձությունն ըստ ամենայնի ճիշտ է:

4. Գալով մյուս գլուխը սխալներին», այն է՝ «սխալներ բանականների մարդավերի մեջ» և «բաց թողնված մի բանի անցքեր», այդ նույնպես անորոշ ու անդեմ արտահայտություններն ուրիշ բան չին, եթե ոչ սոսկ ակնարկում այն ցուցմունքներին, որ ես ինքս եմ արել իմ հրատարակության մեջ (էջ 18, 103—4, 106): Այստեղ գրախոսության հեղինակի սեփական հաշվին կարող էր մնալ սխալների միայն մեկ տեսակը՝ «աստիճանների սխալ թարգմանությունները», բայց հոգնակիով նշված այսպիսի սխալի համար առաջ բերվող միակ օրինակն էլ ամենևին չի խոսում նրա օգտին: Դիմենք գրախոսությանը.

«Հայերեն բնագրի հարիւրապետ բառը ռուսերենում թարգմանված է զինվորական աստիճան ցույց տվող մի անվանումով, որը յուրահատուկ կերպով ուկրաինական է, այն է՝ սոտնիկ: Սույն հանգամանքը կարող է թողնել այն տպավորությունը, թե տվյալ զրվագում նկարագրված դեպքերն ուկրաինական բանակին են վերաբերում... Արդ՝ ռուսերեն թարգմանության մեջ դեպքը ուկրաինական բանակում կատարվածի երևույթ ունի, մի բան, որը չի համապատասխանում իրականությանը, որովհետև խնդրո առարկա դեպքը լեհական բանակում է տեղի ունեցել»:

Բայց ինչո՞ւ է գրախոսը կարծում, թե սոտնիկ բառը «յուրահատուկ կերպով ուկրաինական» է: Ռուսերեն այս բառը XVI—XVII դդ. հարիւրապետ իմաստով (ռուս. սոտ-100) զործածվում էր ոչ թե միայն Ուկրաինայում, այլ նաև ռուսական պետության սահմաններում՝ որպես ռուսական զինվորական աստիճան (տե՛ս «Большая Советская Энциклопедия», հտ. 40, Մոսկվա, 1957, էջ 133—134): Ուստի՝ սոտնիկ բառը ռուսերենում պարզապես և ընդհանրապես նշանակում է հարիւրապետ և ամենևին չի կարող տալ այն տպավորությունը, թե «տվյալ զրվագում նկարագրված դեպքերն ուկրաինական բանակին են վերաբերում»:

Այս կապակցությամբ՝ նաև մի ուրիշ հարց: Իմ հրատարակության մեջ նշել եմ (էջ 90, ծան. 41), որ Հովհաննես Կամենացու հարիւրապետ բառը համապատասխանում է իր ազբյուրի՝ Օբսենտ Կամենացու ժամանակագրության լեհերեն rotmistrz բառին: Գրախոսը հոգնություն է հանձն առել Օբսենտի մոտ նույն իրողությունն իր կողմից կրկին անգամ հայտնաբերելու, որպեսզի այս անգամ այդ բառին ուկրաինական ծագում տա: Ճիշտ է, որ զերմաներենից (Rittmeister) եկող այդ բառը հավասարապես գտնվում է լեհերեն և ուկրաիներեն լեզուների բառարաններում, բայց պետք է իմանալ, որ լեհական պետության սահմաններում ապրող հայերի մոտ, — մանավանդ կոմանախոս հայերի մոտ, ինչպիսին էր Օբսենտ Կամենացին, — զործածության մեջ եղած պատմական և զինվորական տերմինները և հարյուրավոր բառեր բացառապես լեհերենից էին գալիս:

5. Գրախոսության մեջ կարգում ենք. «Հ. Ս. Անասյանը ջանացել է Հովհաննեսի Պատմության մեջ նկարագրված դեպքերի էիշտ թվագրումը վերականգնել՝ նշելով միայն ամսանունները և օրանունները (առանց ցույց տալու ամսաթվերը)»:

Ահա ևս մի նորօրինակ թյուրիմացություն՝ ընթերցողի համար, որը կարծելու է, թե ես թվականներ եմ վերականգնել՝ «նշելով միայն ամսանունները և օրանունները (առանց ցույց տալու ամսաթվերը)»: Բայց գրախոսվող հրատարակությունը թերթող որևէ մասնագետ կարող է միայն զարմանալ այսպիսի մի անտեղի վերագրման համար: Իրականության մեջ առանց ամսաթվերի թվագրումները պատկանում են նույնիսկ Հովհաննես Կամենացուն, որը և զրանում հետևել է իր օգտագործած դիտավոր ազբյուրին՝ Օբսենտի ժամանակագրությանը, այնպես, որ նրա մոտ ընդհանրապես ճշգրտված թվագրում չկա: Իսկ իմ դերը եղել է, ընդհակառակն, վերացնել այդ թերությունը՝ միայն հայտնաբերելով այն ամսաթվերը, որոնք բխում էին ամիսների և օրերի նշումից (օրինակ՝ տե՛ս էջ 45, տող 3, փակագծերի մեջ և արամյան տառերով):

6. Թեև գրախոսը բազմաթիվ օրինակներ է բերում ցույց տալու համար, որ իմ կողմից թվականների ճշտումն ու վերականգնումը (իմա՝ ամսաթվերի հայտնաբերումը) հաջողությամբ են կատարված և «այդ բոլոր թվագրումների ճշտությունն ապացուցված է ուրիշ ազբյուրներով», այնուհանդերձ գտնում է, որ մի բանի թվագրումներ «նկատելիորեն սխալ» են:

Ինչի՞ մասին է խոսքը: «Դեպքերը, զրում է նա, որոնք, ըստ նրա (Հ. Ս. Անասյանի), սեպտ. 12-ին են վերաբերում (ուկրաինական կազակների զորամասերի հրամանատար Բորոգավկայի

պաշտոնավորումը և նրա տեղում Սահայդաչու նշանակումը), տեղի են ունեցել 1621 թ. օգոստոսի վերջինս: Իմ ավելացնում է. «Անհրաժեշտ էր արդյոք բնագրի մեջ մուծել մատուցվող,— որոշ վերջերում՝ ենթադրական,— թվականը, քանի որ դա կմոլորեցնի ընթերցողին»:

Այստեղ ևս ակնհայտ թյուրիմացությունը բնկերցողին մղում է կարծելու, թե Հ. Ս. Անասյանն առհասարակ աշխատել է սրբագրել թվականները և բնագրի մեջ մուծել իր ենթադրածները: Բայց ամենևին այդպես չէ: Ես միայն երևան եմ նանկ Հովհ. Կամենացու տվյալների մեջ թաքնված ամսաթիվերը և ուրիշ ոչինչ: Տվյալ դեպքում՝ Բորոգավիայի պաշտոնավորման թվականը համապատասխան է Հովհաննես Կամենացու տվյալներին: Նա նշելուց հետո, թե Մուստաֆա փաշայի դեպքը տեղի ունեցավ այն երկրչարթի օրը, որն իմ ճշտման համաձայն ընկնում էր սեպտ. 7-ին (և այս սեպտ. 7-ը միշտ է նաև ըստ գրախոսի, իմ մտ. գրախոսություն, էջ 454, տող 6), արձանակում է, որ Բորոգավիայի պաշտոնավորումը տեղի ունեցավ հաջորդ կիրակի օրը, սրբ. Բնականարար, հանդիպում էր սեպտ. 12-ին: Ուրեմն՝ սեպտ. 12-ը ոչ թե ըստ Անասյանի է, ինչպես կարծում է գրախոսը, այլ ըստ Հովհաննես Կամենացու:

7. Շարունակելով իմ հասցեին իր անհիմն վերագրումները թվականների հարցում՝ գրախոսը նշում է, որ «ԵՎՏ-ուկրահնական բանակատեղի դեմ օսմանյան բանակների հարձակումը, որը հրատարակության մեջ թվագրված է սեպտ. 24, իրականության մեջ տեղի է ունեցել սեպտ. 25-ին»:

Մի ավելորդ անդամ կրկնեմ, որ սեպտ. 24 ամսաթիվը նույնիսկ Հովհաննես Կամենացու տվյալների արդյունքն է և ոչ թե իմ ուղղումների: Սեպտ. 25-ին՝ օրը շարաթ էր, իսկ Հովհաննես Կամենացին ասում է, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել ուրբաթ օրը (սեպտ. 24):

8. Գրախոսը նմանապես շարունակում է. «Երևույթի երևելի սպամիլ 3. 4. հողկիկիչը, որը լեհ-ուկրահնական զինված ուժերի հրամանատարն էր, մեռավ ոչ թե սեպտ. 25-ին, այլ՝ 24-ին»:

Այստեղ ևս նույն թյուրիմացությունը՝ Դիտոզությունը դուրս որոշ չափով արդարանար, եթե ուղղված լիներ Հովհաննես Կամենացու հասցեին: Բայց ես կցանկանայի դեռ հարցնել. «Արդյոք «Անհրաժեշտ էր մի երկրորդ անգամ հայտնաբերել մի իրողություն, որի մասին ևս ինքս էի արդեն խոսել: Իմ հրատարակության մեջ նշել եմ (էջ 92, ծան. 61), որ լեհական ազդյունների համաձայն հողկիկիչի մահը տեղի էր ունեցել սեպտ. 24-ին, և բացատրել, թե այս ամսաթիվին ինչու է մի օրով ուշացել Հովհաննես Կամենացու մոտ: Ըստ երևույթին՝ առարկությունների նկղիակը չի կամեցել նկատել իմ դիտողությունը, որպեսզի կարողանա ինձ վերագրել թվականի մի նոր «սխալ»:

9. Ըստ գրախոսի՝ Միմոն զպիրը «խմբագրել էր» Հովհաննես Կամենացու Պատմությունը: Նկատի ունի գրախոսություն սկզբում նշված Միմոն զպիր Լեհացուն, որի հայտնի Ուղեգրությունը հրատարակված է Հ. Ն. Ակիևյանի կողմից:

Բայց Միմոն զպիրը ոչ մի կապ չունի Հովհաննես Կամենացու Պատմության հետ: Վերջինս խմբագրված է Մարգիս զպիրի կողմից, ինչպես նշված է հրատարակության մեջ (էջ 83): Մարգիս զպիր Սարաֆ-Հովհաննեսյանը գրական գործիչ է՝ ծնված մոտավորապես 1740 թ. և մեռած՝ 1805 թ.: Չիշյալ աշխատությունը նա խմբագրել է 1791 թ.: Դժբախտաբար իմ գրքում ես դանց եմ արել մի ծանոթագրություն նվիրել այս հայտնի դեմքին: Այնուհանդերձ իմ կողմից եղած դանցառությունը չի կարող շքեղանք համարվել գրախոսի համար՝ Մարգիս զպիր Սարաֆ-Հովհաննեսյանին շփոթելու և փոխարինելու Միմոն զպիր Լեհացու հետ, որը ծնվել է 1584 թ. և մեռել, հավանաբար, XVII դ. 30-ական թվականներին (այսինքն՝ ավելի քան 160 տարի առաջ, բան 1791 թվականը), և ստեղծելու մի նոր թյուրիմացություն:

Ինչպես դժվար չէ նկատել՝ խնդրո առարկա գրախոսությունն ուրիշ բան չէ, եթե ոչ շտապ գրված մի տեղեկատվություն և ներկայացնում է թյուրիմացությունների մի շարան, որը ձգտում է Հովհաննես Կամենացու Պատմությունն պատերազմին հոթիներու երկի հրատարակության մասին ուխտ կարծիքներ տարածելու հայտնաբերական գրականության մեջ: Այս նախադասներն է, որ ինձ ստիպեց գրի առնել վերոհիշյալ ճշտումները: